ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 27-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N-15-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2025 թվականի փետրվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողների վերապատրաստման, ոստիկանության գվարդիայի ծառայողների հատուկ պատրաստություն և պարբերական վերապատրաստման կարգը և պայմանները սահմանելու մասին» N-15-Լ հրամանի (այսուհետ՝ Հրաման) նախաբանում «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի բառերից հետո լրացնել «19-րդ հոդվածի 2-րդ մասի,» բառերը:

2. Հրամանի հավելվածի 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1 ենթակետով՝ «9.1) Ոստիկանության գվարդիայի ծառայողների՝ հատուկ միջոցների առանձին տեսակների (ապակողմնորոշող լուսային և ձայնային ձեռքի նռնակներ, կրակոցներ և արկեր, ձեռքի ծխանռնակներ, ծխագլանակներ, ծխային կրակոցներ և արկեր, արգելքներ քանդող գործիքներ (սարքեր) և տեխնիկա, մարդկանց և տրանսպորտային միջոցները հարկադրաբար կանգնեցնելու (արգելափակելու) տեխնիկական պատնեշներ, ճանապարհային ոզնիներ և փշալարեր, ջրանետեր, այդ թվում՝ հատուկ ներկող նյութերի օգտագործմամբ, զրահամեքենաներ, արշունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի նռնակներ, կրակոցներ և արկեր, ռետինե գնդակներով փամփուշտներ) և հատուկ տեխնիկայի (զրահափոխադրիչներ) վիրառման հմտություններին տիրապետելու լրացուցիչ հատուկ պատրաստության և լրացուցիչ պարբերական վերապատրաստման ժամկետները որոշվում են ուսումնական

պլաններին համապատասխան:»:

3. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

28.03.2026թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ